

Յոյները՝ հարիւրեակ մը Ատանայի քաղաքին և նոյն-
քան ալ նահանգին մէջ : Գալով Բողոքական-Հայերուն՝
անոնք ունեցած են 655 անձ սպաննուած , և Հայ-Կա-
թոլիկները՝ 200 :

Ընդհանրապէս հաստատուած է որ Չարդերու վա-
ղորդայնին միայն յանձնարարուած է Յոյները հանդիստ
ձգել : Ո՛չ մէկ տեղ քրիստոնեայ տարր մը չէ յար-
դուած , ինչ որ ալ եղած ըլլայ :

Ատենագրութիւնով մը հաստատուած է որ , Էրզրնի
(Ճէպէլի Պէրէքէթի սանձագին գլխաւոր քաղաք) մէջ
երբ բանտը պարպուեցաւ , բանտարկեալներուն մէջ
գտնուող երկու Յոյներ սպաննուած են՝ նոյն իսկ ակե-
ղական իշխանութեանց ներկայութեանը :

Բոլոր այս փաստերը լայնօրէն կ'ապացուցանեն որ ,
Ատանայի Չարդերը՝ միմիայն Հայերու հանդէպ սար-
քուած շարժումի մը նկարագիրը չունին , այլ շարժ-
ման մը քրիստոնեաներուն և ընդհանրապէս Սահմա-
նագրութեան դէմ :

Բաց աստի , նախկին Չարդերու ընթացքին , կողո-
պուտը , և մանաւանդ տուներու և ինչքերու աւերու-
մը , երբէք չեն ունեցած ա՛յնքան մոլեգնութիւն , և
ո՛չ իսկ տեղի ունեցած են այնքան լայն աստիճանի մը
վրայ որքան հիմակուանը :

Մէկ բառով , բոլոր այս սարսափները կ'ապացու-
ցանեն թէ կատաղի խեղադրութեան մը սուրկանք
անցած էր այս դաւառին վրայէն : Այս վայրագութեանց
արդիւնքը այն աստիճանի է որ , անով թաթախուած
հողին կը քանդուի և դատելու կարողութիւնը կը կոր-
արնցնէ :
